



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» փետրվարի 2020 թվականի N 66-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹՎՈՎ ՄԵԿ ՀՈՂԱԿՏՈՐԻ ԱՃՈՒՐԴԸ ԶԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԱՃՈՒՐԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 68-րդ և 69-րդ հոդվածների պահանջներով և հաշվի առնելով այն, որ 2020 թվականի հունվարի 16-ին Զրվեժի համայնքապետարանում կայացած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդում հաղթած, երկրորդ առավելագույն գին առաջարկած անձը սահմանված ժամկետում ամբողջությամբ չի մուծել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը, **որոշում եմ.**

1. 2020 թվականի հունվարի 16-ին աճուրդի ներկայացված Զրվեժ համայնքի Զորադրյուր գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության 07-042-0406-0017 կադաստրային համարի հողակտորի երկրորդ աճուրդը համարել չկայացած՝ սակարկությունների արդյունքում ձևավորված երկրորդ առավելագույն գինը սահմանված ժամկետում ամբողջությամբ չմուծելու պատճառով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված, աճուրդում չվաճառված հողակտորի երկրորդ աճուրդային վաճառքը կազմակերպել 2020 թվականի փետրվարի 18-ին և հաստատել հրապարակային ծանուցման տեքստը՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել Զրվեժի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանին՝ ոչ ուշ 2020 թվականի փետրվարի 11-ից, ապահովել սույն որոշմամբ հաստատված երկրորդ աճուրդով օտարման ենթակա հողամասի հրապարակային ծանուցման հրապարակումը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, [www.azdarar.am](http://www.azdarar.am) հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և սահմանված կարգով ապահովել աճուրդի անցկացումն ու արդյունքների ամփոփումը:

4. Աճուրդի վարման համար աճուրդավար նշանակել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանին:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌՈՒԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. փետրվարի 10  
գ. Զրվեժ



**Հավելված**  
**ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի**  
**ղեկավարի 2020 թվականի**  
**փետրվարի 10-ի N 66-Ա որոշման**

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Ջրվեժի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի դասական երկրորդ աճուրդ**

h/h	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը	Մակերեսը հեկտար	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Մեկնարկային գինը (դրամ)
1	Ջրվեժ համայնք, Ձորաղբյուր գյուղ 07-042-0406-0017	0,1208	գյուղատնտեսական, վարելահող	գյուղատնտեսական գործունեության համար	300000

Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ սերվիտուտներ)՝ չկան: Ծանապարհներ, ջրատար, կոյուղի, էլեկտրահաղորդման գծեր, գազատար՝ չկան: Երջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումներ՝ չկան:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Ջրվեժի համայնքապետարանի շենքի 2-րդ հարկում, համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, Մեյքոնյան փողոց 76:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաքանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:

Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Ջրվեժի համայնքապետարան (Մեյքոնյան փողոց 76, 2-րդ հարկ, հեռախոսներ՝ 010-684929, 060-535553):

Աճուրդը կայանալու է 2020 թվականի փետրվարի 18-ին ժ. 14:00-ին, Ջրվեժի համայնքապետարանի շենքի 2-րդ հարկում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2020 թվականի փետրվարի 15-ը, ժամը 14:00-ը:



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» փետրվարի 2020 թվականի N 67-Ա

#### ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ և 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներով, **որոշում եմ**.

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Սիրանուշ Միշայի Աբգարյանին 2020 թվականի ընթացքում Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 21-րդ փողոցի թիվ 15 հասցեի հողամասին հարակից տարածքում տեղադրելու արտաքին գովազդ:

2.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Անահիտ Գուրգենի Ավոյանին՝ 2020 թվականի ընթացքում Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 14-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 2,4 հասցեում զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների կազմակերպմամբ և իրացմամբ, ինչպես նաև թույլատրել տեղադրելու արտաքին գովազդ 14-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 2,4 հասցեի հողամասին հարակից տարածքում:

3.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում տնտեսվարող սուբյեկտներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. փետրվարի 10  
գ. Զրվեժ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» փետրվարի 2020 թվականի N 68-Ա

#### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով 2020 թվականի հունվարի 16-ին նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի միավորման պայմանագիրը և հաշվի առնելով քաղաքացի Հունան Հարությունի Մարտիրոսյանի և Նարինե Պարույրի Սարգսյանի լիազոր անձ Աշոտ Ասիլբեկի Գալստյանի խնդրանքը, **որոշում եմ.**

1. Հունան Հարությունի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 46-րդ փողոցի թիվ 15 հասցեի և Նարինե Պարույրի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 46-րդ փողոցի թիվ 13 հասցեի հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Զրվեժ, գյուղ Զրվեժ, 46-րդ փողոց, թիվ 13,15:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հունան Հարությունի Մարտիրոսյանին և Նարինե Պարույրի Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

 Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. փետրվարի 10  
գ. Զրվեժ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» փետրվարի 2020 թվականի N 69-Ա

#### ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌԴԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 828-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 3-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 30-րդ և 48-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2020 թվականի փետրվարի 7-ի թիվ 01/12/00883-2020 գրությամբ տրված համաձայնությունը հողամասի գործառնական նշանակությունը փոխելու վերաբերյալ, **որոշում եմ.**

1. Զրվեժ համայնքի Զովք գյուղի համայնքային սեփականություն հանդիսացող 07-030-014-0026 կադաստրային համարի բնակավայրի այլ հողերից 750,0 քառ.մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակավայրի հասարակական կառուցապատման հողերի:
2. Զրվեժ համայնքի Զովք գյուղի համայնքային սեփականություն հանդիսացող 750,0 քառ.մետր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Զրվեժ, գյուղ Զովք, Գլխավոր խճուղի, թիվ 13/1:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ Զրվեժ համայնքի Զովք գյուղի Գլխավոր խճուղի, թիվ 13/1 հասցեում գտնվող 750,0 քառ.մետր մակերեսով գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:
5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանի վրա:
6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՌՈՒԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. փետրվարի 10  
գ. Զրվեժ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» փետրվարի 2020 թվականի N 70-Ա

#### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Կարապետ Հովսեփի Պողոսյանի խնդրանքը, **որոշում եմ**.

1.Քաղաքացի Կարապետ Հովսեփի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի Զրվեժ Այգեգործական զանգվածի 2-րդ թաղամասի թիվ 54 հասցեից բաժանված  $S_1=500,0$  քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Զրվեժ, գյուղ Զրվեժ, Զրվեժ Այգեգործական զանգված, 2-րդ թաղամաս, թիվ 54,  $S_2=588,0$  քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Զրվեժ, գյուղ Զրվեժ, Զրվեժ Այգեգործական զանգված, 2-րդ թաղամաս, թիվ 54/1:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Կարապետ Հովսեփի Պողոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. փետրվարի 10  
գ. Զրվեժ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» փետրվարի 2020 թվականի N 71-Ա

#### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ**.

1.Քաղաքացի Գնել Խաչիկի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 17-րդ փողոցի թիվ 15 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ մանսարդային հարկով մեկ հարկանի բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գնել Խաչիկի Ավետիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՌՐԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. փետրվարի 10  
գ. Զրվեժ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» փետրվարի 2020 թվականի N 72-Ա

#### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ.**

1.Քաղաքացի Նարեկ Վարդգեսի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի 14-րդ նրբանցքի թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ երկհարկանի բնակելի տան կառուցման և տարածքի մասնակի պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նարեկ Վարդգեսի Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՌՈՒԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. փետրվարի 10  
գ. Ջրվեժ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» փետրվարի 2020 թվականի N 73-Ա

#### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ.**

1.Քաղաքացիներ Էրիկ Նելսոնի Ապիյանին և Մարինե Աշոտի Սամվելյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 49-րդ փողոցի թիվ 20 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ երկհարկանի բնակելի տան կառուցման և պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Էրիկ Նելսոնի Ապիյանին և Մարինե Աշոտի Սամվելյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌՈՒԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ



2020 թ. փետրվարի 10  
գ. Զրվեժ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» փետրվարի 2020 թվականի N 74-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 746-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, **որոշում եմ.**

1. Համայնքի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 11-ի «Ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու մասին» թիվ 746-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 1-ին կետում «բնակելի տան վերակառուցման» բառերը փոխարինել «բնակելի տան» բառերով:

2. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նարինե Մկրտչի Տարախչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ



2020 թ. փետրվարի 10  
գ. Զրվեժ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» փետրվարի 2020 թվականի N 75-Ա

**ՔԱՆԴԱՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ.**

1.Քաղաքացի Նարինե Մկրտչի Տարախչյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 45-րդ փողոցի թիվ 73 հասցեի հողամասում թույլատրել քանդելու անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 06052019-07-0045 վկայականում նշված թիվ 1 բնակելի տունը՝ 125,88 քառ.մետր մակերեսով:

2.Քաղաքացի Նարինե Մկրտչի Տարախչյանին տալ բնակելի տան, ավտոտնակի, լողավազանի, հյուրատան կառուցման և պարսպապատման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 45-րդ փողոցի թիվ 73 հասցեի տնամերձ հողամասում:

3.Պարտավորեցնել Նարինե Մկրտչի Տարախչյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նարինե Մկրտչի Տարախչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ



2020 թ. փետրվարի 11  
գ. Ջրվեժ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» փետրվարի 2020 թվականի N 76-Ա

#### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ**.

1. Քաղաքացի Անահիտ Հարությունի Հայրապետյանին տալ երկհարկանի բնակելի առանձնատան կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 22-րդ փողոցի թիվ 18 հասցեի տնամերձ հողամասում:

2. Պարտավորեցնել Անահիտ Հարությունի Հայրապետյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Անահիտ Հարությունի Հայրապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. փետրվարի 11  
գ. Զրվեժ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» փետրվարի 2020 թվականի N 77-Ա

### ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, 84-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 21-ի N 40-Ն որոշումը, **որոշում եմ.**

1. Զրվեժ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության և համայնքի ղեկավարի կողմից 2019 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:

2. Հաստատել Զրվեժ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության և համայնքի ղեկավարի կողմից 2019 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:

3. Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել Զրվեժ համայնքի ղեկավարին կից «Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման» խորհրդակցական մարմնի անդամ Անահիտ Մարգարյանին:

4. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում տեղադրել Զրվեժ համայնքի բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. փետրվարի 11  
գ. Զրվեժ

### ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Ջրվեժի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2020 թվականի փետրվարի 11-ից մինչև փետրվարի 26-ը ներառյալ կազմակերպվող Ջրվեժ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության և համայնքի ղեկավարի կողմից 2019 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված Ջրվեժ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության և համայնքի ղեկավարի կողմից 2019 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ կարող են մինչև 2020 թվականի փետրվարի 26-ը ներառյալ ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնել համացանցային կայքում՝ [www.jrvezh.am](http://www.jrvezh.am) կամ ուղարկել համապատասխան էլեկտրոնային հասցեով՝ [jrvezh.kotayq@mta.gov.am](mailto:jrvezh.kotayq@mta.gov.am), ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել Ջրվեժի համայնքապետարան:

Հանրային քննարկումների բաց լսումները տեղի կունենան 2020 թվականի փետրվարի 26-ին, ժամը 16:00-ին, Ջրվեժի համայնքապետարանում, հասցեն՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց, թիվ 76:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 010-68-49-29; 055-73-55-53 հեռախոսահամարներով:

Ջրվեժի համայնքապետարան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» փետրվարի 2020 թվականի N 78-Ա

#### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի առաջին մասով,

#### **որոշում եմ.**

1. 2020 թվականի փետրվարի 17-ին, ժամը 16<sup>00</sup>-ին հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով՝

1) Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 84-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2) Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 81-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2. Պարտավորեցնել աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանին՝ օրենքով սահմանված կարգով ավագանու անդամներին տրամադրելու արտահերթ նիստի օրակարգը, ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՌՐԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. փետրվարի 11  
գ. Զրվեժ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» փետրվարի 2020 թվականի N 79-Ա

#### ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներով, **որոշում եմ.**

1.Թույլատրել «ՀԱՍ Սուսաննա» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Սամվել Պողոսյան, Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 2-րդ թաղամասի թիվ 6/8 հասցեում 2020 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացմամբ, հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ:

2.Թույլատրել «Կոմսալ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Արամ Ալիխանյան, Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 20-րդ փողոցի թիվ 3 հասցեում 2020 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:

3.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Աննա Մովսեսյանին՝ Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 41-րդ փողոցի թիվ 70 հասցեում 2020 թվականին զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ:

4.Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

5.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ տնտեսվարող սուբյեկտին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ



2020 թ. փետրվարի 11  
գ. Զրվեժ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» փետրվարի 2020 թվականի N 80-Ա

#### ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զրվեժի համայնքապետարան է դիմել քաղաքացի Մարատ Անդրանիկի Մանուկյանը (ծնված՝ 1966 թվականի սեպտեմբերի 25-ին), սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղում գտնվող 2077,1 քառ.մետր մակերեսով 07-042-0341-0065 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողին կից, իր կողմից փաստացի օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող 07-042-0341-0033 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողակտորից 304,9 քառ.մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխելու գյուղատնտեսական նշանակության այլ հողերից գյուղատնտեսական նշանակության վարելահողի՝ հետագայում իրեն օտարելու նպատակով (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 01062018-07-0062, տրված 2018 թվականի հունիսի 1-ին):

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջներով, **որոշում եմ.**

1. Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 07-042-0341-0033 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողակտորից 304,9 քառ.մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել գյուղատնտեսական այլ հողերից գյուղատնտեսական 5-րդ կարգի անջրդի վարելահողի:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ վերը նշված 304,9 քառ.մետր մակերեսով գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

3. Հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌՈՒԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ



2020 թ. փետրվարի 12  
գ. Զրվեժ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» փետրվարի 2020 թվականի N 81-Ա

#### ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զրվեժի համայնքապետարան է դիմել քաղաքացի Գոռ Անդրանիկի Գրիգորյանը (ծնված՝ 1989 թվականի դեկտեմբերի 3-ին), սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղում գտնվող 1000,0 քառ.մետր մակերեսով 07-042-0341-0062 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողին կից, իր կողմից փաստացի օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող 07-042-0341-0033 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողակտորից 124,5 քառ.մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխելու գյուղատնտեսական նշանակության այլ հողերից գյուղատնտեսական նշանակության վարելահողի՝ հետագայում իրեն օտարելու նպատակով (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 23032017-07-0037, տրված 2017 թվականի մարտի 23-ին):

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջներով, **որոշում եմ.**

1. Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 07-042-0341-0033 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողակտորից 124,5 քառ.մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել գյուղատնտեսական այլ հողերից գյուղատնտեսական 5-րդ կարգի անջրդի վարելահողի:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ վերը նշված 124,5 քառ.մետր մակերեսով գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

3. Հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ



2020 թ. փետրվարի 12  
գ. Զրվեժ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» փետրվարի 2020 թվականի N 82-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արտակ Ռուբիկի Խաչատրյանի (ծնված՝ 1985 թվականի փետրվարի 1-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 10/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնական կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 08112018-07-0011 վկայական, տրված 2018 թվականի նոյեմբերի 8-ին և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2020 թվականի փետրվարի 4-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծ):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արտակ Ռուբիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 10/1 հասցեի տնամերձ հողակտորում 2013-2018 թվականներին ինքնական կառուցվել են՝ թիվ 1 բնակելի տան N 2, 3, 4 սենյակները՝ 16,75 քառ.մետր, թիվ 2 բնակելի տան կիսանկուղը՝ 45,9 քառ.մետր և 1-ին հարկը՝ 118,6 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Արտակ Ռուբիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 10/1 հասցեի տնամերձ հողակտորում ինքնական կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում են.**

1. Արտակ Ռուբիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 10/1 հասցեի տնամերձ հողակտորում ինքնական կառուցված թիվ 1 բնակելի տան N 2, 3, 4 սենյակները՝ 16,75 քառ.մետր, թիվ 2 բնակելի տան կիսանկուղը՝ 45,9 քառ.մետր և 1-ին հարկը՝ 118,6 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Զրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 471 250 (չորս հարյուր յոթանասունմեկ հազար երկու հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը:

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնական կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանին վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արտակ Ռուբիկի Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌՈՒԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. փետրվարի 12  
գ. Զրվեժ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» փետրվարի 2020 թվականի N 83-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Հրաչիկ Սանդրոյի Քարիմյանի (ծնված՝ 1948 թվականի փետրվարի 20-ին) և Վահե Հրաչիկի Քարիմյանի (ծնված՝ 1977 թվականի դեկտեմբերի 17-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ-2 այգետարածքի 2-րդ տեղամասի թիվ 43 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ սեփականության իրավունքի վկայագիր և ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր, վավերացված 2019 թվականի դեկտեմբերի 3-ին, լիազորագիր, տրված 2019 թվականի հոկտեմբերի 24-ին, «ԼԻԼԱՐՄԻՆ» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 15-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն կադաստրային քարտեզի և «ԼԻԼԱՐՄԻՆ» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Հրաչիկ և Վահե Քարիմյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ-2 այգետարածքի 2-րդ տեղամասի թիվ 43 հասցեի այգեգործական հողամասում 1988 թվականին ինքնակամ կառուցվել են՝ բնակելի տուն նկուղ 126,13 քառ.մետր, բնակելի տուն 1-ին հարկ՝ 138,06 քառ.մետր, բնակելի տուն 2-րդ հարկ՝ 126,43 քառ.մետր և բնակելի տուն մանսարդ՝ 126,43 քառ.մետր արտաքին մակերեսներով (կառուցման տարեթվերի վերաբերյալ համայնքապետարանում տվյալները բացակայում են, որի համար հիմք են հանդիսացել քաղաքացիներ Հրաչիկ և Վահե Քարիմյանների դիմումում նշված և «ԼԻԼԱՐՄԻՆ» ՍՊԸ-ի կողմից չափագրված և հաստատված հողամասի հատակագծում նշված տարեթվերը):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Հրաչիկ և Վահե Քարիմյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ-2 այգետարածքի 2-րդ տեղամասի թիվ 43 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շենք-շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում են.**

1.Հրաչիկ և Վահե Քարիմյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ-2 այգետարածքի 2-րդ տեղամասի թիվ 43 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տուն նկուղը՝ 126,13 քառ.մետր, բնակելի տուն 1-ին հարկը՝ 138,06 քառ.մետր, բնակելի տուն 2-րդ հարկը՝ 126,43 քառ.մետր և բնակելի տուն մանսարդը՝ 126,43 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հրաչիկ և Վահե Քարիմյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. փետրվարի 12  
գ. Ջրվեժ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» փետրվարի 2020 թվականի N 84-Ա

### ՀԱՍՄԻԿ ՎԱՀԱՆԻ ՍԵՐՈՔՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Զրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 2-րդ այգետարածքի 28-րդ տեղամասի թիվ 8 այգետնակի բնակիչ Հասմիկ Վահանի Սերոբյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ Հասմիկ Վահանի Սերոբյանը բնակվում է ընտանիքի վեց անձով, ինքը և ամուսինը՝ Հովհաննես Սոյոպայի Սերոբյանը, ներկայումս չեն աշխատում, իրենց խնամքի տակ են չորս անչափահաս երեխաները՝ Լաուրա, Անահիտ, Գայանե և Դավիթ Հովհաննեսի Սերոբյանները, ծնված՝ 2007, 2010, 2014 և 2016 թվականներին, ընդ որում՝ Լաուրա Սերոբյանն ունի ողնաշարի լուրջ խնդիրներ, հանդիսանում է մանկուց հաշմանդամ, ունի վիրահատության կարիք, ընտանիքը չունի տարրական կենցաղային պայմաններ և ընտանիքի ֆինանսական և սոցիալական վիճակից ելնելով Հասմիկ Վահանի Սերոբյանը դիմել է համայնքապետարան՝ դրամական օգնություն ստանալու խնդրանքով, **որոշում եմ**։

1. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Հասմիկ Վահանի Սերոբյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հասմիկ Վահանի Սերոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌՌԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. փետրվարի 13  
գ. Զրվեժ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» փետրվարի 2020 թվականի N 85-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈՂՉԱԿԱՆ ՊԱՏՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի, «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության Սահամանդրական օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ և 18-րդ հոդվածի 6-րդ մասերի պահանջներով, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Սահամանդրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք հանրաքվեին «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչական կողմերի կողմից քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար Ջրվեժ համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

- 1) Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 79, 6-րդ փողոցի թիվ 39 և 20-րդ փողոցի թիվ 1 հասցեին հարող հատվածներում,
- 2) Ձորաղբյուր գյուղի Լուսավորության փողոցի թիվ 20 հասցեին և Ազատության փողոցի թիվ 118 հասցեին հարող հատվածներում,
- 3) Զովք գյուղի Գլխավոր խճուղի թիվ 16/1 հասցեին հարող հատվածում:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌՈՔԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ



2020 թ. փետրվարի 13  
գ. Ջրվեժ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» փետրվարի 2020 թվականի N 86-Ա

### ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք հանրաքվեի անկացման համար Ջրվեժ համայնքում սահմանել հետևյալ տեղամասային կենտրոնները.

1) Ջրվեժ համայնքի թիվ 1 տեղամասային կենտրոն՝ Ջովք գյուղի Գլխավոր խճուղի թիվ 13 հասցեում գտնվող միջնակարգ դպրոցի շենքը:

Թիվ 1 ընտրական տեղամասն ընդգրկում է Ջովք գյուղի բոլոր փողոցները:

2) Ջրվեժ համայնքի թիվ 2 տեղամասային կենտրոն՝ Ձորաղբյուր գյուղի Լուսավորության փողոցի թիվ 20 հասցեում գտնվող միջնակարգ դպրոցի շենքը:

Թիվ 2 ընտրական տեղամասն ընդգրկում է Ձորաղբյուր գյուղի բոլոր փողոցները:

3) Ջրվեժի համայնքի թիվ 3 տեղամասային կենտրոն՝ Ջրվեժ գյուղի 10-րդ փողոցի թիվ 3/1 հասցեում գտնվող շինությունը:

Թիվ 3 ընտրական տեղամասն ընդգրկում է Ջրվեժ գյուղի 6-րդ փողոցը, 6-րդ փողոցի 1-ին և 2-րդ փակուղիները, 6-րդ փողոցի 1-ին և 2-րդ նրբանցքները, 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի 1-ին փակուղին, 8-րդ փողոցը, 8-րդ փողոցի 1-ին նրբանցքը, 10-րդ փողոցը, 10-րդ փողոցի 1-ին փակուղին, 12-րդ փողոցի կենտ համարներով 1-ին տնից 33-րդ տունը, զույգ համարներով 2-րդ տնից 60-րդ տունը, 12-րդ փողոցի 1-ին փակուղին, Մելքոնյան փողոցի 78-րդ տնից մինչև 99 տունը, Մելքոնյան փողոցի 1-ին և 2-րդ նրբանցքները, Մելքոնյան փողոցի 3-րդ փակուղին:

4) Ջրվեժ համայնքի թիվ 4 տեղամասային կենտրոն՝ Ջրվեժ գյուղի 3-րդ փողոցի թիվ 5 հասցեում գտնվող միջնակարգ դպրոցի թիվ 1 մասնաշենքը:

Թիվ 4 ընտրական տեղամասն ընդգրկում է Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի 1-ին տնից մինչև 77-րդ տունը, 2-րդ փողոցը, 2-րդ փողոցի 1-ին փակուղին, 4-րդ փողոցը, 17-ից 50-րդ փողոցները, Մելքոնյան փողոցի 1-ին և 2-րդ փակուղիները, Այգեգործական ընկերության թաղամասերը, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ դաշտերը:

5) Ջրվեժ համայնքի թիվ 5 տեղամասային կենտրոն՝ Ջրվեժ գյուղի 3-րդ փողոցի թիվ 5 հասցեում գտնվող միջնակարգ դպրոցի թիվ 2 մասնաշենքը:

Թիվ 5 ընտրական տեղամասն ընդգրկում է Ջրվեժ գյուղի 1-ին փողոցը, 1-ին փողոցի 1, 2, 3, 4 փակուղիները, 1-ին փողոցի 1-ին նրբանցքը, 3, 5, 7, 9, 11 փողոցները, 12-րդ փողոցի կենտ համարներով 35-րդ տնից 69/1 տունը, զույգ համարներով 62-րդ տնից 76-րդ տունը, 12-րդ փողոցի 2, 3, 4 փակուղիները, 13-րդ փողոցը, 13-րդ փողոցի 1-ին փակուղին, 14-րդ փողոցը, 14-րդ փողոցի 1, 2, 3-րդ փակուղիները, 15, 16 փողոցները, 16-րդ փողոցի 1-ին փակուղին:

2. Հանձնարարել աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանին, գործող կարգի համաձայն տեղամասային կենտրոնների գտնվելու վայրի մասին իրազեկել լիազոր մարմնին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌՈՒԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. փետրվարի 13  
գ. Ջրվեժ

